

ԶՐՈՅՑ ՎԻՊԱԳԻՐ ՆԱՐ ԴՈՍԻ ՀԵՏ

Ոչ ոք չի կարող ժխտել այն ճշմարտութիւնը, որ մեր գրականագէտների ստեղծագործական արժէքը, նրանց կատարած հասարակական դերը, իդէոլոգիան լաւ հասկանալու եւ առհասարակ նրանց գրական ընդհանուր կերպարանքն աւելի պայմանաւոր, աւելի ճիշտ որեւէկտիվ կերպով լուսաբանելու տեսակէտից խոշոր նշանակութիւն ունին ոչ միայն նրանց կենսագրութիւնները, նամակաները, յուշերը, այլ եւ նրանց էպոխայի եւ միջավայրի հետ կապւած պատմական աւելանքները, եւ որ զլիսաւորն է, հենց իրենց՝ հեղինակների լուսաբանութիւնները իրենց կենսքի եւ ստեղծագործութիւնների մասին:

Սակայն ի՞նչ է կատարւած մեզանում այդ ուղղութեամբ: Փաստն այն է, որ մինչեւ օրս էլ չունինք նման ամբողջական մի գործ: Հրապարակի վրայ կան միայն կցկտուր տեղեկութիւններ, ամփոփ ուրազոցներ: Այն ինչ անողոք ժամանակն էպոխայից խլում է շատ արժէքաւոր նիւթեր: Այժմ ատենն է, որ բոլոր արժէքաւոր նիւթերը խնամքով հաւաքելին եւ ամփոփելին առանձին գործերով:

Տաղանդաւոր վրպագիր Նար Դոսի հետ ունեցած մեր զրոյցը այդ ուղղութեամբ կատարւած համեստ մի փորձ է, որ առաջ ենք բերում:

— Ո՛ր թւից է սկսում ձեր ստեղծագործութեան շրջանը եւ ի՞նչ երեւոյթի հետ է կապւած այդ:

— Ստեղծագործութեանս շրջանը սկսում է

1883 — 84 թւականից, այսինքն 16—17 տարեկան հասակիցս, եւ չեմ կարող ասել, թէ ինչ երեւոյթների հետ է եղել կապւած այդ, հսկսել եմ գրել այնպէս, ինչպէս նոր թեւաւորւած թոյունն սկսում է առաջին անգամ երգել:

Գրական գործունէութիւնս սկսել եմ ուսանաւորներ գրելով, որոնցից մի երկուսը լոյս տեսան այն ժամանակաւ «Արաքս» հանդիսում (Պետերբուրգ) եւ «Սոխակ Հայաստանի» երգերի ժողովածուի մէջ (կարծեմ Բագու), եթէ յիշողութիւնս չի դաւաճանում ինձ՝ իմ իսկական ազգանունն սկզբնաւորաբար — Ս. Յ. (Միքայէլ Յովհաննիսեան): Սակայն գրական այդ ձեւը շուտով ձգեցի եւ անցայ արձակագրութեան. սկսեցի գրել մանր պատմածքներ ինչ չըլապատող կեանքից եւ ապա վիպականեր ու վէպեր:

— Ի՞նչ ազդեցութիւն են արել ձեր վրայ դարաշրջանի գրական հոսանքները, ո՞ր հեղինակները խոր եւ անջնջելի տպաւորութիւն են գործել եւ առհասարակ ի՞նչ է գրւած եղել ձեր դրօշի վրայ:

— Դարաշրջանի գրական գլխաւոր ուղղութիւնը Բաֆֆիական ոռմանդիկ ուղղութիւնն էր, որն ինձ վրայ ոչ մի ազդեցութիւն չի գործել: Առհասարակ 80ական թւականների Հայ ծայր աստիճանն ազգատիկ գրականութեան մէջ եւ ոչինչ կամ գրեթէ ոչինչ չեմ գտել, որից կարող լինէի առողջ անունդ առնել, բաց ի միայն Սունդուկեանի պիէսներից, որոնց ազդեցութեան տակ նոյն իսկ մի պիէս էի գրել (եթէ չեմ սխալւում, 1883 թ.) նոյն (Թիֆլիսի) բարձրագոյն (այդ պիէսի ձեռագիրը, դժբախտաբար, կորել է): Եթէ մի գրական



Ն Ա Ր Դ Ո Ս

ներթիւն ինձ վրայ խոր եւ անջնջելի տպաւորութիւն է գործել, այդ ալն ժամանակայ ռուս դրականութիւնն էր յանձին Տուրգենեւի, Դոստոյեւսկու, Դոնշարովի, Տոլստոյի. որոնց երկերից օգուել եմ գրւածքներս հոգեբանօրէն հիմնաւորելու տեսակէտից: Դրօշիս վրայ գրւած է եղիւ. — Հետո՛ւ Լ'աֆֆրակաւն հէքեաթաքանութիւնները, իրական կեանքը՝ ինչպէս որ կայ եւ մարդուն ներքինը:

— Զեր «Աննա Սարոեան»ի նիւթը իրական կեանքից է վերցրած. էպոխայի ո՛ր էջն էք ուզեցել դուք վրձինել, եւ յետոյ ճի՛շդ է Լէօի ալն կարծիքը, որ ասում է, թէ դուք բաւականացել էք այդ վէպում միայն դրութիւնն արձանագրելով, առանց քննելու նրա պատճառները, առանց երեւոյթի պատմութեան եւ հոգեբանութեան մէջ մտնելու:

— «Աննա Սարոեան»ի նիւթը վերցրել եմ 80-ական թւականների հայ բուժականական ընտանիքի կեանքից: Նպատակս եղել է ցոյց տալ նիւթականի վրայ հիմնւած մի ընտանիքի կործանումը եւ այդ ընտանիքում մենացած աղէկայ տրագեդիան ալն դէպքում, երբ այդ ընտանիքի միակ յենարանը — նիւթականը — քանդուում է: Բուրժուական դաստիարակութիւնն Աննային չի տւել ոչ մի իրական գէնք կեանքի ձախորդութիւնների դժւ կըուելու եւ հէնց որ այդ ձախորդութիւնները զաւիտ ցցւում են նրա առէկէ, նա շնչահեղձ է լինում, ինչպէս ջրից դուրս նետւած ձուկը:

Լէօն ճիշդ է ասում, որ ես բաւականացել եմ միայն դրութիւնն արձանագրելով. բայց եթէ՛ նա գտնում է որ ես չեմ բացատրել պատճառները, չեմ մտել երեւոյթի պատմութեան եւ հոգեբանութեան մէջ, ապա կ'ասեմ, որ այդ դէպքում ես կը նմանէի ալն նկարչին, որ աքաղաղ նկարելով, տակը զրէր. «Սա աքաղաղ է»:

— Նոյնպէս իրական կեանքից է վերցրած ձեր «Տանտիրոջ աղջիկը». ընտանիքի ո՛ր էջն էք ուզեցել վրձինել այդ պատկերով:

— «Տանտիրոջ աղջիկ»ի նիւթն իրական կեանքից է ալնչափով, որչափով որ պարտկերում է ալն ժամանակայ թիֆլիսեան՝ հայ մեղանական ընտանիքի կեպարքը. ինձ ծանօթ են այդպիսի ընտանիքների մէկից աւելի աղջիկներ, որոնք միջնակարգ կրթութիւն ստանալով հանդերձ ամուսնացել են կամ աւելի ճիշտ՝ որոնց ամուսնացրել են տգէտ, նոյն իսկ

միանշամայն անգրագէտ վաճառականներին ետ միմիայն նրա համար, որ վերջիններս հարուստ են եղել, եւ նրանք, այդ աղջիկները, ամուսնալուց յետոյ տարիների ընթացքում մոռացել են իրենց ստացած կրթութիւնը եւ, միանշամայն գոհ իրենց բարեկեցիկ կեանքից, դարձել են նոյն մեշչանսէիները, ինչ որ իրենց տգէտ մայրերը, մօրաքոյրերը, հօրաքոյրերը, եւն.:

— «Սպանւած աղաւնին» կարելի՛ է ձեր գլուխ-գործոցը համարել եւ իրական թեմա է:

— Հարկա՛ւ, ես չեմ որոշողը, թէ՛ այդ վէպակն իմ գլուխ-գործոցն է. իսկ թեման ոչ միայն իրական է, այլ եւ, եթէ՛ կարելի է այսպէս ասել՝ գերբիրական, եւ մշտական. այժմէական՝ քանի զոյնթիւն կ'ունենայ երկու սեռի յարաբերութեան պրոբլէմը. — մի պրոբլէմ, որ այժմ աւելի, քան երբ եւ իցէ, ուժեղ թափով ծնւնում է ռուս յետ-հոկտեմբերեան դրականութեան մէջ՝ նոր կենցաղ ստեղծելուն առընթեր:

Ի դէպ ասեմ, որ «Սպանւած աղաւնու» նիւթը եւ հիմնական վերամշակման եմ եւթարկել եւ այդ վիպակը, որը վերամշակումից յետոյ ալ ընդարձակ վէպ է դարձել, շուտով յետ կը տեսնի Երեսնամեայ Պետերսպոլի հրատարակութեամբ:

— Ի՞նչպիսի հոգեբանական պրոբլէմ էք ուզեցել շօշափել ձեր «Մահը» մեծ վէպում:

— «Մահը» վէպիս մէջ ուզեցել եմ դժել կեանքի եւ մահւան պրոբլէմը՝ զործունէութեան եռանդով լեցուն լուստեսի եւ ապաթիայի եթարկւած յոռետեսի իրարահակադիր տեսակէտերից: Առանձնապէս մահւան պրոբլէմն աշխատել եմ տալ վէպի վերջում Շահ-եանի նամակի մէջ:

— Կարլի՞ք է ձեր «Պայքար» վէպը 90-ական թւականների հասարակական-դրական հոսանքները եւ տիպերը ցոյցանոց մի պատկեր համարել:

— «Պայքար»ի մէջ աշխատել եմ դուրս բերել ալն ժամանակայ (90-ական թւականների) մեր հասարակական զորնչիներ զանազան ներկայացուցիչների տիպեր, որոնք համարեա բոլորն էլ իրականից են վերցւած: Ուզեցել եմ պատկերել ալն ժամանակայ հասարակական երկու ղլխաւոր հոսանքների — պահպանողական եւ ազատամիտ կամ, այս-

պէս կոչւած, նոր-դարական եւ մշակական— բաղխումը:

Բայց դուք չհարցրիք «Մեր Թաղի» պատմաւոյնքերի մասին, որոնք իմ պատանեկան կեանքի անմիջական տպաւորութիւնների տակ գրւած աշխատութիւններն են, ըստին էլ իրական կեանքից:

— Առհասարակ ձեր գրւածքներում հասարակական ո՞ր խաւերն էք պատկերել եւ գլխաւորապէս ո՞ր միջավայրն էք վերցրել:

— Իմ գրւածքներում եւ ուղեցել եմ պատկերել առհասարակ մեծ քաղաքի խոլ թաղերում իրենց ողորմելի կեանքը քարշ տուող խեղճ, աղքատ դասակարգի չարքաշ կեանքը, այդ դասակարգի մէջ տիրող մտաւոր թանձր խաւարը, նախապաշարունակները, մանաւանդ կնոջ սոսկալի վիճակը տղամարդու ձեռքին, այնուհետեւ նոյն քաղաքի մեղշանական եւ մանր-բուրժուական ընտանիքի կեանքը, մեր հասարակական հոսանքների բաղխումները, մեր ինտելիգենցիայի, դանազան ներկայացուցիչներին տիպերը:

— Որո՞նք են ձեր ձեռագիրն եւ մինչեւ այժմ լոյս չտեսած առանձին երկերը:

— Իմ առանձին գրքով լոյս չտեսած երկերից եւ կարող եմ թել հետեւեալները, որոնց բնաւ չէի էլ կամենալ, որ լոյս տեսնէին առանձին գրքով, իբրեւ շատ թոյլ երկեր. «Ճշմարիտ բարեկամը» — վիպակ, «Նուէն» — վիպակ, «Բարերար եւ որդեգիր» — վիպակ, «Քնքոյշ լարեր» — վէպ, «Չազունեան» — վէպ, եւ այլ մանր-մունր պատմածքներ: Սրանք բոլորն էլ տպւած են 1886—87 թւականներին:

— Որո՞նք են ձեր կեանքի ընտրւած գծերը:

— Իմ կենսագրութեան մէջ հետաքրքրական ոչինչ չկայ, ուստի թոյլ տւէք ձեր հարցի այս կէտն անպատասխան թողնեմ: Այսօր քանք միայն կ'ասեմ, որ ծնւել եմ 1867 թիւն թիֆլիսում, ուսել եմ ուսական դպրոցում եւ արհեստագիտական դպրոցում: Ամբողջ կեանքս անց եմ կացրել մեր համարեա բոլոր պարբերական թերթերի եւ հանդէսների խմբագրատներում իբրեւ թարգմանիչ եւ թարսուղար, իսկ հոկտեմբերեան յեղափոխութիւնից յետոյ մինչեւ այս տարւան սեպտեմբեր ամիսը՝ տպարաններում իբրեւ սրբագրիչ: Այժմ թոշակառու եմ:

է.

Վերջացնում է Նար Դոսը եւ լուռ ծխում: Նայում եմ նրա արձանի պէս քանդակւած լիջախոս եւ արտայայտիչ դէմքին, որ իր գծագրութեամբ ընտրոշում է նրա բնաւորութեան եռանդը եւ յամառ աշխատասիրութեան ոգին:

Նրա սպիտակ փոքրիկ պելւը եւ սպիտակ ձորուսը ներդաշնակուած են նրա զլխի ձիւնի պէս սպիտակ մազերին, որոնց ներքեւի մասում շրջանաձեւ մի սեւ գիծ է մնացել:

Այդ սպիտակ ֆոնի վրայ իշխում են նրա ծիծեռնակի թեւերի պէս հաստ սեւ ունքերը, որոնց տակ մեղմ եւ անուշ ժպտում են նրա փայլուն եւ խելացի աչքերը:

Այդ աչքերի մէջ կարդում եմ նրա վէպերը:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

Թիֆլիս

11 Դեկտեմբեր 1929